ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/29

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի 22.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 22.02.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի 5-րդ մասի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի հրավերի թիվ 9 հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնագրում, որպես պարտադիր վավերապայման պետք է նշվի ընկերության բանկային հաշվեհամարը:

Թիվ 9 հավելվածին կից՝ վճարման պահանջագրում, նույնպես որպես պարտադիր վավերապայման պետք է նշվի ընկերության բանկային հաշվեհամարը:

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտ է ներկայացրել և մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով գնման ընթացակարգին:

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի թիվ 9 հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնագրում, որպես Ընկերության սպասարկող բանկ նշել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, իսկ որպես հաշվեհամար նշել է՝ 217-002-121630-001:

Ընկերությունը թիվ 9 հավելվածին կից՝ վճարման պահանջագրում, որպես հաշվեհամար նշել է՝ 217002121630001, սակայն առանց միջանկյալ գծերի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.02.2018թ. ժամը 11:00-ին (www.gnumner.am կայքում հրապարակվել է 20.02.2018թ.) կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), քանի որ Ընկերության տուժանքի մասին համաձայնագրում հաշվեհամարը ներկայացվել է գծիկով, իսկ վճարման պահանջագրում՝ առանց գծիկի:

Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և դիմել լիազոր մարմնին վերոնշյալ հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար:

Հանձնաժողովի 16.02.2018թ. շարունակելով իր աշխատանքը, արձանագրել է, որ 15.02.2018թ. ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.02.2018թ. թիվ 04/27-1/2381-18 պարզաբանման գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգանքը, որ Ընկերության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրում հաշվեհամարը ներկայացվել է գծիկով, իսկ վճարման պահանջագրում առանց գծիկի, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն 09.02.2018թ. «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ին տվել է տեղեկանք, որի համաձայն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի անվամբ սպասարկվող 217002121630001 հաշվեհամարը բացառապես նույնն է և ճիշտ է նաև 217-002-121630-001 ձևաչափով:

Երկու ձևաչափն էլ հավասարապես կիրառելի են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում իրականացվող բանկային գործարքներում:

Որպես վերոնշյալ փաստի ապացույց, ցանկանում ենք Գնումների բողոքարկման խորհրդին հայտնել, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն 2017թ. օգոստոսի 30-ին մասնակցել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-4/3 ծածկագրով գնման ընթացակարգին:

Վերը նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով՝ Ընկերության կողմից ներկայացվել է հայտ, որի թիվ 9 հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնագրում որպես հաշվեհամար նշել է 217-002-121630-001, իսկ վճարման պահանջագրում՝ 217002121630001, սակայն առանց միջանկյալ գծերի:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-4/3 ծածկագրով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի քարտուղար երկու դեպքում էլ եղել է Ա. Բաղրամյանը:

Սակայն, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-4/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ոչ միայն չի մերժվել Ընկերության հայտը, այլ հակառակը՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ ԳՀԾՁԲ-4/3-1 ծածկագրով պայմանագիր:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի թիվ 9 հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնագրում, որպես պարտադիր վավերապայման պետք է նշվի ընկերության բանկային հաշվեհամարը:

Թիվ 9 հավելվածին կից՝ վճարման պահանջագրում, նույնպես որպես պարտադիր վավերապայման պետք է նշվի ընկերության բանկային հաշվեհամարը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի թիվ 9 հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնագրում, որպես Ընկերության հաշվեհամար նշել է 217-002-121630-001, իսկ վճարման պահանջագրում, որպես հաշվեհամար նշել է 217002121630001, սակայն առանց միջանկյալ գծերի:»:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն 09.02.2018թ. «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ին տվել է տեղեկանք, որի համաձայն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի անվամբ սպասարկվող 217002121630001 հաշվեհամարը բացառապես նույնն է և ճիշտ է նաև 217-002-121630-001 ձևաչափով և երկու ձևաչափն էլ հավասարապես կիրառելի են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում իրականացվող բանկային գործարքներում:

Թիվ 9 հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնագրի 1.2 կետի համաձայն՝ ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները (Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը (այսուհետ՝ հայտի ապահովում) ներկայացնում է ընկերությանը սպասարկող բանկին:

Նույն պահանջագրի 1.3 կետի համաձայն՝ բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից տուժանքի համաձայնագրի և ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող

պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, բանկին տրամադրվելու դեպքում:

Այսինքն, տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը տրվում է Պատվիրատուին և Ընկերության կողմից խախտում անելու դեպքում այն ուղարկվում է Ընկերությանը սպասարկող բանկին, որն էլ պետք է կատարի պահանջագրի մեջ ընկերության ստանձնած պարտավորությունը, այն է՝ Ընկերության հաշվեհամարից կատարի համապատասխան փոխանցում: Այդ դեպքում փոխանցում կատարողը՝ Բանկը իր գրության մեջ նշել է, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի անվամբ սպասարկվող 217002121630001 հաշվեհամարը բացառապես նույնն է և ճիշտ է նաև 217-002-121630-001 ձևաչափով և երկու ձևաչափն էլ հավասարապես կիրառելի են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում իրականացվող բանկային գործարքներում:

Հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, այն է՝ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան: «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն գտնում է, որ Հանձնաժողովը սխալ է կիրառել Կարգի 41-րդ կետը, հայտի ապահովումը ներկայացված չի եղել հրավերի հահանջներին անհամապատասխան, քանի որ ինչպես արդեն նշվել է, Ընթացակարգի հրավերի թիվ 9 հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնագրում, որպես պարտադիր վավերապայման պետք է նշվի ընկերության բանկային հաշվեհամարը և վճարման պահանջագրում նույնպես, ինչն էլ կատարվել է Ընկերության կողմից՝ այսինքն նշվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի անվամբ սպասարկվող վերը նշված նույն հաշվեհամարը:

Ընկերության համար նաև անհասկանալի է, ինչպես է լինում, որ երկու գնման ընթացակարգերի դեպքում, միևնույն պատվիրատու հանդիսանալով ՀՀ պաշտպանության նախարարությունը, մի դեպքում չի մերժում, իսկ մյուս դեպքում որոշում է մերժել Ընկերության հայտը, չմանրամասնելով, արդյոք ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.02.2018թ. թիվ 04/27-1/2381-18 գրությամբ հստակ նշել է, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը պետք է մերժվի, թե ոչ:

Ելնելով վերոնշյալ իրավական հիմքերից և փաստական հանգամանքներից՝ Ընկերությունը գտնում է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Ի լրումն 22.02.2018թ. ներկայացված բողոքի Ընկերությունը գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2018/29 ծածկագրով 27.02.2018թ. բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ներկայացուցիչները հայտնեցին, որ պետք է առարկություն ներկայացնեն Ընկերության կողմից ներկայացված բողոքի դեմ, և Խորհրդի կողմից նրանց տրվեց 2 օր ժամանակ՝ առարկությունները ներկայացնելու համար:

Սակայն 02.02.2018թ. դրությամբ, դեռևս որևէ գրություն չի ստացվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:

Վերը նշված նիստի ժամանակ Խորհրդի կողմից նաև պահանջվեց, որպեսզի Պատվիրատուի ներկայացուցիչները ներկայացնեն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուղարկված հարցման և ՀՀ ֆինանսների նախարարության 12.02.2018թ. թիվ 04/27-1/2381-18 գրությամբ տրված պարզաբանման փաստաթղթերը:

Այս կապակցությամբ ցանկանում ենք հայտնել, որ Պատվիրատուի հարցման և ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանման բովանդակությունից է բխում Ընկերության հայտը մերժելու իրավաչափությունը, քանի որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.02.2018թ. շարունակված արձանագրությամբ, արձանագրել է, որ 15.02.2018թ. ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.02.2018թ. թիվ 04/27-1/2381-18 պարզաբանման գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգանքը, որ Ընկերության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրում հաշվեհամարը ներկայացվել է գծիկով, իսկ վճարման պահանջագրում առանց գծիկի, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերության ունեցած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը իր պարզաբանման մեջ չի նշել, որ եթե հաշվեհամարում առկա են գծեր, ուրեմն անհրաժեշտ է մերժել «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը ինքն է որոշում կայացրել և գտել, որ Ընկերության հայտը ենթակա է մերժման, սակայն հղում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ պարզաբանմանը, որը, ինչպես նաև հարցման բովանդակությունը հայտի չեն, իսկ այս պարագայում կողմերից յուրաքանչյուրը ինքը պետք է ապացուցի իր կողմից վկայակոչված փաստերը և դրա հիմքում դրված մերժման հիմնավորված կամ անհիմն լինելը նույնպես:

Բացի այդ ցանկանում ենք հայտնել, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գները զգալիորեն տարբերվում են 2-րդ տեղ զբաղեցնող մասնակցի գներից, և այս պարագայում մերժելով ընկերության հայտը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի ապահովում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված նպատակները և սկզբունքները, մասնավորապես օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գները մոտ 30-40% ավելի ցածր են:»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 07.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած, 16.02.2018թ. շարունակված և 20.02.2018թ. հաստատված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) անհամապատասխանող ճանաչելու մասին, «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները և սույն որոշումներից հետո կայացված մնացած բոլոր որոշումները,

2. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից թիվ 9 հավելվածով ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը գնահատել ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Ընկերության ներկայացուցիչներ Սարգսյան Գառնիկը և Մկրտչյան Ռաֆայելը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.03.2018թ. թիվ ԴՎԱ/764 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով բաց մրցույթին հայտ են ներկայացրել թվով յոթ մասնակից, այդ թվում՝ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով վերջինիս կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պայմաններին, պարզեց, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին հայտարարությունում բանկային հաշվեհամարը ներկայացվել է գծիկով, իսկ վճարման պահանջագրով հաշվեհամարը ներկայացված է առանց գծիկի, այսինքն իրարից տարբերվող երկու հաշվեհամար: Միաժամանակ նշեմ նաև, որ «CLIENT TREASURY»-«LSFinance» համակարգ մասնակցի տվյալները մուտքագրելուց համակարգը բանկային հաշվեհամարը գծիկով չի ընդունում (հասկանում):

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և այն հանգամանքը, որ նմանատիպ հարցեր առաջացել էր մի շարք ընթացակարգերում գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը որոշեց կասեցնել նիստը և գրությամբ դիմել լիազոր մարմին պարզաբանման համար:

ՀՀ ֆինանսների նախարարության առ 12.02.2018թ. N 04/27/-1/2381-18 գրությամբ պարզաբանվել է, որ Օրենքի 26-րդ կետի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն, քանի որ իրավունք չուներ մասնակցից պահանջելու պարզաբանում կամ մասնակցին տալու շտկման հնարավորություն որոշեց մերժել «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը:

Խորհրդի նիստերին մասնակցում էին նախարարության ներկայացուցիչներ Բաղրամյան Արմանը և Գասպարյան Տիգրանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի 22.02.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.03.2018թ. թիվ ԴՎԱ/764 գրավոր դիրքորոշումը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերը

(այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 07.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2018թ. թիվ ԴՎԱ/459 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 12.02.2018թ. թիվ 04/27-1/2381-18 գրությունը, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 09.02.2018թ. և 12.03.2018թ. տրված տեղեկանքները, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 07.02.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետով արձանագրել է, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ (պահանջներին), մասնավորապես Ընկերության տուժանքի մասին համաձայնագրում հաշվեհամարը ներկայացվել է գծիկով, իսկ վճարման պահանջագրում՝ առանց գծիկի:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշում է ընդունել նիստը կասեցնել և գրությամբ դիմել լիազոր մարմին պարզաբանում ստանալու նպատակով՝ թե արդյո՞ք մասնակցի հայտը պետք է գնահատվի հրավերի պահանջների չհամապատասխանող, եթե վերջինիս հայտի ապահովման մեջ նշված հաշվեհամարը ներկայացվել է գծիկով:

Հանձնաժողովը նույն արձանագրությամբ 16.02.2018թ. արձանագրել է, որ 15.02.2018թ. ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.02.2018թ. թիվ 04/27-1/2381-18 պարզաբանման գրությունը, և հաշվի առնելով այն հանգանքը, որ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին հայտարարությունում բանկային հաշվեհամարը ներկայացվել է գծիկով, իսկ վճարման պահանջագրով՝ առանց գծիկի, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշում է մերժել «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը:

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ըստ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի 09.02.2018թ. «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ին տրված տեղեկանքի՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում «Կարկոմավտո սերվիս»

ՍՊԸ-ի անվամբ սպասարկվող 217002121630001 հաշվեհամարը բացառապես նույնն է և ճիշտ է նաև 217-002-121630-001 ձևաչափով և երկու ձևաչափն էլ հավասարապես կիրառելի են: Բացի այդ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ին 12.03.2018թ. տրամադրել է ևս մի տեղեկանք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով բաց մրցույթից բխող պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի՝ թիվ 9 հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնագրում նշված 217-002-121630-001 և վճարման պահանջագրում նշված 217002121630001 հաշվեհամարները բացառապես նույնն են և ճիշտ են: Երկու ձևաչափն էլ հավասարապես կիրառելի են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում իրականացվող բանկային գործարքներում:»:

Բողոքի քննության նպատակով 27.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ 08.02.2018թ. թիվ ԴՎԱ/459 գրությամբ դիմել են ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ պարզելու համար, թե արդյո՞ք մասնակցի հայտը պետք է գնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող, եթե հայտի ապահովման մեջ նշված հաշվեհամարը ներկայացվել է գծիկով:

Ի պատասխան Պատվիրատուի գրությանը ՀՀ ֆինանսների նախարարությանը 12.02.2018թ. թիվ 04/27-1/238-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված պահանջներով: Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև, որ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը և հաշվի առնելով այն, որ Ընկերության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրում հաշվեհամարը ներկայացվել է գծիկով,

իսկ վճարման պահանջագրում՝ առանց գծիկի, Հանձնաժողովը՝ ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով, որոշել է «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/1 ծածկագրով ընթացակարգի Հրավերով հաստատված՝ վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգի՝ 5-րդ կետի համաձայն՝ վճարողի հաշվի համար պարտադիր դաշտը լրացվում է վճարողի բանկային

հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

• «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրում Ընկերության բանկային հաշվեհամարը՝ 217-002-121630-001, լրացվել է գծիկով, իսկ վճարման պահանջագրում՝ 217002121630001, առանց գծիկի:

• «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ին սպասարկող՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ տուժանքի մասին համաձայնագրում նշված՝ 217-002-121630-001 և վճարման պահանջագրում նշված՝ 217002121630001 հաշվեհամարները բացառապես նույնն են և ճիշտ են:

• ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ 12.02.2018թ. թիվ 04/27-1/238-18 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը տրված պարզաբանմամբ, չի անդրադարձել «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը բավարար կամ անբավարար գնահատելու հարցադրմանը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի 22.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունել՝

• 07.02.2018թ ժամը 11:00-ին կայացած, 16.02.2018թ. շարունակված և 20.02.2018թ. հաստատված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) անհամապատասխանող ճանաչելու մասին, «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները և նույն որոշումներից հետո կայացված մնացած բոլոր որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

• «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի կողմից թիվ 9 հավելվածով ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ընթացակարգի հրավերով

սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխանող գնահատելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ